ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/73, 21.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114

Գնման առարկան՝ գույքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի 2,3,4,6-12,14,15,17-19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ Երևան, Մելիք-Ադամյան 1 /ՀՀ ֆինանսների նախարարություն/

Բողոք բերող ընկերություն՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ

Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փ., շենք14. բն.21

e-mail: ms.foton2014@mail.ru

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի 1

Գնման ընթացակարգի՝

Ծածկագիր՝ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114

Գնման առարկա՝ կահույքի /գույքի/ ձեռքբերում

ԲՈՂՈՔ

Երևանի քաղաքապետարանի կողմից կահույքի /գույքի/ ձեռքբերման նպատակով 2022-04-01 հրապարակել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով աճուրդի ընթացակարգ:

Ընթացակարգը իրականացվել է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով՝ որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով հայտ է ներկայացրել և մասնակցել նաև Ֆոտոն ՍՊԸ-ն և Ջուզեպպե ՍՊԸ-ն:

Սակայն Ջուզեպպե ՍՊԸ-ն հայտը ներկայցնելու, այսինքն մասնակցելու օրվա դրությամբ փաստացի ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում /սև ցուցակում:

eauction.armeps.am համակարգի թերության կամ ոչ կատարյալ լինելու պատճառով այդ կազմակերպությունը մասնակցել է աճուրդին, դեռ ավելի մասնակցելով բոլոր 23 լոտերին, միտումնավոր, աճուրդը խաթարելու, ինչպես նաև այլ մասնակիցների գները արհեստականորեն իջեցնելու դիտավորությամբ կատարել է գնի իջեցումներ բոլոր լոտերով, իսկ որոշ լոտերի մասով ճանաչվել է նաև առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մասնակիցների կողմից կատարված աճուրդային նվազեցումները կարող եք տեսնել https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/17499/code/1LXVlC3Ut9Sx1YPUsdWK1YHUsi0yMi8xMTQ=/ հղմամբ: /ծավալուն լինելու պատճառով այն չի արտացոլվում սույն բողոքի տեքստում/:

Ուսումնասիրելով աճուրդի ընթացքը ակնհայտ է դառնում Ջուզեպպե ՍՊԸ-ի գործողությունների դիտավորությունը աճուրդը խաթարելու համար:

Սակայն 14.04.2022թ-ին գնահատող հանձնաժողովը N 4 արձանագրության համաձայն չկայացած է հայտարարել միայն 1, 5, 13, 16, 23 չափաբաժինները, հաշվի չառնելով այն, որ այդ ընկերության գործողությունների արդյունքում տուժել են նաև մյուս ընկերությունները, խախտվել է վերջիններիս գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գտնում ենք, որ վերոնշյալի պատճառով խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և 7-րդ մասով սահմանված պահանջները, այն է.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

<u>Վերոգրյալով պայմանավորված՝</u> Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

Պարտավորեցնել ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 2, 3, 4, 6-12, 14, 15, 17-19-րդ չափաբաժինների մասով ևս հայտարարել չկայացած:

Կից ներկայացվում է.

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը:

2. Ընկերության տնօրենի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

3. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով գնահատող հանձնաժողովի N 4 արձանագրության պատճենը:

ՖՈՏՈՆ ՍՊԸ տնօրեն՝ ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ